



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. hsuugt.abovyan.kotayq@mta.gov.am

10-ը նոյեմբերի 2022թ.

**ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների հարգարժան ներկայացուցիչներ, գործընկերներ.

Ձերմոտեն շնորհավորում եմ բոլորիս տեղական ինքնակառավարման օրվա առթիվ: Տեղական ինքնակառավարումը ամենօրյա հետևողական և համախմբված աշխատանք պահանջող համակարգ է, որի կարևորագույն առանձնահատկությունը քաղաքացիների ազատ կամարտահայտումն է, նրանց ակտիվ մասնակցությունը համայնքային նշանակության հարցերին. այս եղանակով արագ բացահայտվում են համայնքներում առկա խնդիրները և ըստ առաջնահերթության լուծվում: Մեր միասնական նպատակն է, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի պահանջներին համապատասխան, բարելավել համայնքի բնակիչների կյանքի որակը և ապահովել բնակավայրերի համաչափ զարգացումը: Համոզված եմ, որ զարգացող համայնքները պետության առաջընթացի հարցում առանցքային դեր ունեն, ուստի յուրաքանչյուրս, տեղում բարեկարգ և կենսունակ համայնքներ ստեղծելով, զգալիորեն կնպաստենք մեր երկրի զարգացմանը: Որպես տեղական ինքնակառավարման մարմին՝ մենք շարունակելու ենք անաչառ վերաբերմունքով, բնակիչների սրտացավ ներգրավվածությամբ և պետություն-համայնք արդյունավետ համագործակցությամբ աշխատել ի բարօրություն Աբովյան համայնքի:

Հարգելի՛ գործընկերներ.

տեղական ինքնակառավարման օրվա առթիվ կրկին շնորհավորելով, բոլորիս մաղթում եմ հաջողություններ և անխափան ընթացք համայնքների բարեկարգմանն ու զարգացմանն ուղղված հայրենանվեր և պատասխանատու աշխատանքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ